ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ

Փետրվարի 28-ին սկսվեց Երևանի պետական Համալսարանի պրոֆեսորա-դասախոսական կազմի տարեկան հաշվետու գիտական նստաշրջանը, որը տևեց հինգ օր։

Առաջին օրը, առավոտյան պլենար նիստում, համալսարանի ռեկտոր պրոֆ. Մ. Ներսիսյանի ներածական խոսքից հետո լսվեցին գիտական զեկուցումներ։ Առաջինը՝ «Հայաստանը կենտրոնական միջերկրածովային սիստեմում» թեմայով հանդես եկավ պրոֆ. Հ. Մաղաքյանը։ Տեսական ֆիզիկայի ամբիոնի վարիչ պրոֆ. Գ. Սահակյանի զեկուցումը նվիրված էր գերխիտ երկնային մարմինների տեսության հարցերին, իսկ պրոֆ. Մ. Տեր-Միքայելյանը և դոց. Ռ. Ղազարյանը ունկնդիրներին ծանոթացրին օպտիկական կանալների միջով ինֆորմացիայի հաղորդման հնարավորությունների հարցին։

Նույն օրը, երեկոյան պլենար նիստում, լսվեցին պրոֆեսորներ Գ. Սևակի «Գրական լեզու և գրականության լեզու», Հ. Գարրիելյանի «Ազգի սահմանման հարցի շուրջը», Մ. Ներսիսյանի «Առաջին հայ ուտոպիստ-սոցիալիստը» և Մ. Մկրյանի «Հայ հին գրականության սկզբնավորման հարցի շուրջը» թեմաներով ուշագրավ զեկուցումները։

Մարտի 1—4-ը նստաշրջանի 6 գիտական բաժանմունքների 16 սեկցիաներում կարդացվեցին մոտ 150 զեկուցումներ։ Առանձնապես ունկնդիրների ակտիվ մասնակցությամբ և գիտական բարձր մակարդակով անցան մաթեմատիկայի, քիմիայի, մեխանիկայի, պատմության, կենսաբանության, լեզվագիտության և այլ սեկցիաների նիստերը։

Արժանի են հիշատակման հատկապես պրոֆեսորներ Ա. Թալալյանի («Սիստեմներ, որոնցով կազմված շարքերը ներկայացնում են բոլոր չափերի ֆունկցիաները»), Ս. Պողոսյանի («Հայաստանում ֆեոդալիզմի առաջացման հարցի շուրջը»), դոց. Պ. Բեզիրգանյանի և Ա. Ակրիտովի («Ռենտգենյան ճառագայթների դիֆրակցիայի օպտիկական սկզբունքների նորագույն հարցերը»), դոց. Կ. Ջորանյանի («Բազադրյալ ձողերի լարումների կոնցենտրացիայի մասին») և բազմաթիվ այլ զեկուցումներ, որոնք աչքի ընկան իրենց խոր վերլուծություններով ու կարևոր եզրահանգումներով։

Համալսարանի հաշվետու տարեկան նստաշրջանը, որն ամփոփեց բուհի գիտնականների մեկ տարվա գիտահետազոտական աշխատանքների արդյունքները, մեծ հետաքրքրություն առաջացրեց մայրաքաղաքի գիտական հասարակայնության մեջ։

Թ. ԳԱԼՍՏՅԱՆ

ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԵՐԵԿՈ

Փետրվարի 21-ին ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի նիստերի դահլիճում կայացավ մեծարման երեկո, որը կազմակերպված էր ակադեմիայի նախագահության և ԱՄԿԿ կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի կողմից և նվիրված էր պետական ու կուսակցական հին գործիչ, ՀՍՍՀ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս Արտաշես Կարինյանի ծննդյան 80 և կուսակցական-հասարակական ու գրական-գիտական գործունեության 60-ամյակին։

Երեկոն ներածական խոսքով բացեց Հայաստանի գիտությունների ակադեմիայի պրեզիդենտ, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանը։ Հոբելյարի կյանքի ու գործունեության մասին զեկուցեց մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Հայկական ֆիլիալի դիրեկտոր, գիտությունների ակադեմիայի թղթակից-անդամ, պրոֆեսոր Մատուր Ավդալյանը։

Արտաշես Կարինյանը (Գարրիելյան) ծնվել է 1886 թ. նոյեմբերի 11-ին (նոր տոմարով նոյեմբերի 24-ին) Բալախանիում՝ Անդրկովկասի պրոլետարական կենտրոն Բաքվի արվարձանում։ Նրա հայրը՝ Բալասի Գարրիելյանը, Հնոտային Ղարաբաղի Հուշի քաղաքից Բաքու եկած քարտաշի որդի էր և ծառայում էր նավթահանքերում։ Պատանի Արտաշեսը վերջացրել է Բաքվի առաջին գիմնազիան։ Ապա 1906 թ. մտել է Պետերբուրգի Համալսարանի իրավաբանական ֆակուլտետը, որը ավարտել է 1910 թ.։

Ա. Բ. Կարինյանը անցել է հեղափոխական գործի երկար ուղի։ Իր հասարակական-քաղաքական կյանքը նա սկսել է շատ վաղ հասակից, երիտասարդական տարիներից ակտիվ մասնակցություն է ունեցել հեղափոխական շարժմանը որպես պրոպագանդիստ և ընդհատակյա խմբակների զեկավար։ Սկսած 1906 թ. նա բոլշե-